

ԼԷՈՆԱՐԴՕ ԴԱ ՎԻՆՉԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

1

Բոլոր նրանք, ովքեր հետաքրքրվում են արևեստով, ճանաչում են Լէոնարդո դա Վինչիին, որի հանճարը ոչ միայն տիրապետում էր 15-րդ դարու իտալական վերածննդեան շրջանը, այլ նաեւ արևեստի եւ գիտութեան բոլոր շրջանները:

Մեծ նկարիչ, հզօր քանդակագործ, յանդուգն հնարիչ, խոր մտածող, արևեստի տեսաբան, ճարտարապետ, ճարտարագէտ, մաթեմատիկոս, մարդաբան եւ այլն, եւ այլն: Նրա ֆաուստեան միտքը դեռ մինչեւ այսօր շարունակում է իր նպաստը բերել մարդկային առաջադիմութեան:

Նա նման էր յստակ եւ զգայուն մի հայելիի, որի մէջ արտացոլւում էին կեանքի ամենաբարդ երեւոյթները: Նրա սուր միտքը՝ խոր, տրամաբանական, յանդուգն՝ խուզարկում էր մարդկային մարմնի եւ հոգու գաղտնիքները: Նա մշտապէս լարւած հետաքրքրութիւն էր, բարդ զգայնութիւն, որ թրթռում էր բոլոր այն ապրումների հետ, որոնք շարժում են մարդկային սիրտը:

Նա շահագրգռւած էր բոլոր երեւոյթներով, որոնք կապւած են կեանքի հետ. արևեստ, գրականութիւն, երաժշտութիւն, գիտութիւն, հեռաւոր երկրներ եւ ժողովուրդներ, թռչունների թռչելու ձեւերը, երկրաշարժային երեւոյթները, շուքերի եւ սուերների օրէնքները, օդային փոփոխութիւնների պատճառները, լոյսերի թրթռումը եւ խաղը, մարդկային մարմնի կազմութիւնը:

Նրա հետաքրքրութիւնները արդարեւ անսահման էին:

Աւսած է նրա մասին, որ նա Վերածննդեան շրջանի ամենաամբողջական մարդն էր:

Եւ, սակայն, չնայած իր թողած բազմաթիւ գործերին եւ արտադրութիւններին, նա մնում է իր դարաշրջանի ամենախորհրդաւոր, նոյնիսկ առեղծւածային մարդը:

Մեզ թւում է, որ շնորհիւ իր նկարներին, իր ձեռագրերին, իր մասին գրած բազմահազար ուսումնասիրութիւններին, մենք նրան խորապէս ճանաչում ենք, մինչդեռ ամեն քայլափոխին նա խուսափում է մեզանից, ինչպէս մի գաղտնիք, մի հանելուկ, նման այն անիմանալի ժպիտին, որ զարգարում է իր Մոննա Լիզայի շրթունքները:

Պատմաբանը, հետազոտողը երբեք վստահ չէ նրա մասին արած իր եզրակացութիւնների մէջ: Իր նկարների արժէքաւորումը, նոյնիսկ ինքնութիւնը, վիճաբանութիւնների առարկայ եղած են բազմաթիւ տարիներ: Իր գծագրութիւնների մեծ մասը, որոնց մասին այնքան յիշատակութիւններ կան, բոլորովին անհետացել են կամ անխնայ փչացման ենթարկւած են: Իր քանդակները կորած են կամ աւերւած են: Նրա կառուցած բազմաթիւ ջրանցքները, պարիսպները մոռացւած են, առանց իսկ յիշելու: Իր բազմաթիւ ճամբորդութիւնների մասին ոչ ոք ոչինչ չգիտի:

Լէոնարդօ դա Վինչին իսկապէս հանելուկային մարդ է:

2

Եւ ահա ծագում է մեզ հետաքրքրող հարցը. եղե՞լ է նա Հայաստանում, ինչպէս նա մեզ հաւատացնում է:

Մի շարք պատմաբաններ, որոնք հետաքրքրւել են այդ հարցով եւ անհրաժեշտ պրպտումներ կատարել, ինչպէս դր. Ռիխտերը, Մակ Կորդին, Ստրժիգովսկին, Կլեմենտէ Ֆուզերօն, ոչ մի կասկած չունեն այդ մասին: Ուրիշներ՝ մեծ մասամբ իտալացիներ, ոչ անշահախնդիր կերպով, ինչպէս պիտի տեսնենք,

բուռն կերպով մերժում են այդ եւ Լէոնարդոյի ճամբորդութիւնը դասաւորում են նկարչի ստեղծած հէքիաթների շարքը:

Քննենք այդ հարցը:

Եւ նախ, ամեն բանից առաջ, քննենք նրա ձեռագիրները վիճակը:

Լուրջ եւ ամենայն հաւատքի արժանի վկաներ, ինչպէս, օրինակի համար, Անտոնիօ դէ Բեատիսը, այն ժամանակ Արագոնի կարդինալի քարտուղարը, մեզ վկայում է, որ Լէոնարդօ դա Վինչիին այցելելու ժամանակ Կլուում, նա տեսաւ «մի անվերջանալի հատորների թիւ, ամբողջովին գրւած ռամիկ լեզուով»: Ինքը՝ Լէոնարդօն խօսում է 120 գրքերից կազմւած իր ձեռագիրների մասին, որոնցից դժբախտաբար մեզ հասել է միայն կէսը, դա էլ բոլորովին անկատար վիճակում:

Յրանչեսկօ Մելցին, որին Լէոնարդօ դա Վինչին կտակել էր իր ձեռագիրները, այդ հատորները տեղափոխել էր Միլանօ, իր բնակութեան վայրը: Քառասունեօթը տարի յետոյ, Վազարին, յայտնի նկարիչը եւ «Արւեստագէտների կեանքերի» հռչակաւոր հեղինակը, այդ ձեռագիրները տեսել էր եւ թղթատել Մելցիի մօտ: Սակայն, արդէն այդ ժամանակ, ձեռագիրների մեծ մասը բաժան-բաժան եղած էին, որովհետեւ Վազարին խօսում է մի միլանցի նկարչի մասին, որ սեփականացրել էր այն մասերը, որ առնչութիւն ունէին բուն արւեստի հետ:

Մելցիի մահից յետոյ ձեռագիրների անողոք ցրումը սկսւել էր անմիջապէս: Նրանցից 14 հատը անցել էին Միլանոյի Ամբրոզեան գրադարանին, երկու հատը բոլորովին անհետացել էին, 13 հատը տարւել էր, Բոնապարտի հրամանով, 1796-ին, Յրանսիա, որոնցից Ատլանտեան մատեան կոչւած մասը, աւելի ուշ, վերադարձրել էին Միլան: Հաւաքածուի ուրիշ բազմաթիւ մասեր՝ բազմաթիւ արկածներից եւ թափառումներից յետոյ՝ ապաստան էին գտել Վինձորի Արքայական գրադարանում, Բրիտանական թանգարանում, Արեւելեան Կէլիպսոնի Գիտութիւնների եւ արւեստների գրադարանում, լորդ Լեստերի Հոլկանհոլի գրադարանում: Ուրիշ անթիւ մասեր բոլորովին կորել էին:

Այդ ձեռագիրներից ամենաերկարը՝ Ատլանտեան մատեանը, պարունակում է 1222 էջեր, որոնք միացված են ժողովածուի ձեռով:

Ասեմ նաեւ, որ այդ ձեռագիրների բաժանումից առաջ, ում Պոմպէօ Լէոնին անխնայ կերպով կտրտել է հարիւրաւոր էջեր, ընտրել ինչ որ ինքը համարում էր գիտական, կազմել մի գիրք եւ մնացածը նետել:

Չնայած այդ անմիտ եւ տգէտ վատնումներին, Լէոնարդոյի ձեռագիրներից մեզ հասել են 5000 էջեր:

Ինչ որ, բարեբախտաբար, մնացել է, հանդիսանում է մի հսկայական գանձ: Նրանց ընթերցումը մեզ թոյլ է տալիս ըմբռնելու Լէոնարդոյի աշխատելու ձեւը, նրա մտահոգութիւնները, նրա աշխարհայեացքը եւ, նաեւ, որոշ չափով, նրա կենսագրութիւնը:

Ինչ որ նախ եւ առաջ աչքի է զարնում, դա նրա հսկայական մտային հորիզոնն է, որոնումների բազմապիսուսութիւնը, ամեն բան ըմբռնելու սուր ծարաւը եւ ամեն բան վերլուծելու անդիմադրելի պահանջը:

Եթէ թղթատեսք սոսկ Ատլանտեան մատեանը, մենք կը հանդիպենք հազար ու մի խնդիրների, ամեն ինչ խառնիխուռն, ըստ վայրկեանի պահանջին, առանց սիստեմի, ըստ տրամադրութեան: Նոյն էջի վրայ հանդիպում ենք ինչ-որ մաթեմատիկական գումարումների, զանազան ուրւագծերի, ցանկի, երկրաչափական խնդիրների, տնային հաշիւների, մարդկային թոքերի միջից անցնող օդի համեմատութեան տեղատուութեան եւ մակընթացութեան հետ, տեսողութեան մասին ստեղծած նոր տեսութիւնների, Միջերկրականի ջրերի շոգիացման մասին ինչ-որ նոր տեսակէտների, կարկուտի բնոյթի մասին արւած նոր դիտումների եւ բազմաթիւ գծագրութիւնների, Փորմուլաների եւ ուրիշ բաների:

Երբ մենք դիմում ենք այդ ձեռագիրների վկայութեան, պէտք է աչքի առջեւ ունենանք երկու կարեւոր հանգամանք: Նախ այն, որ այդ ձեռագիրները բարբարոս կերպով կտրտված են, կորուստի մատնւած, անսիստեմատիկ կերպով բաժանւած

են, ապա — եւ այդ վերին աստիճանի կարեւոր է — որ այդ գրութիւնները երբեք չեն գրւած հրատարակութեան համար, այլ եղել են զուտ անհատական յիշատակարաններ: Այդ այնքան ճիշտ է, որ Լէոնարդօն ամեն բան արել է նրանց ընթերցումը դժւարացնելու: Ինչպէս յայտնի է, նրանք գրւած են աջից ձախ, այնպէս որ անհրաժեշտ է հայելի գործածել նրանց կարողանալ կարդալու համար:

Եթէ այդ այդպէս է — եւ այդ անհերքելի կերպով այդպէս է — ինչպէ՞ս կարելի է ենթադրել, որ Լէոնարդօն ուզում էր ինքն իրեն խաբել կամ պատմել բաներ, որոնք իրականութեան չեն համապատասխանում: Ինչո՞ւ նա պիտի խօսէր դէպքերի մասին, որոնք երբեք տեղի չեն ունեցել, ինչպէս որոշ քննադատներ, բուլթօրէն, մեզ ուզում են հաւատացնել:

3

Այդ նախնական, անհրաժեշտ բացատրութիւններից յետոյ զանք ուղղակի այն էջերին, որոնք գտնւում են Ատլանտեան մատեանի մէջ եւ պարունակում են հռչակաւոր «Հայկական նամակները»:

Սրանից տասնեակ տարիներ առաջ դր. Ռիխտերը, որ այդ ձեռագիրների առաջին ուսումնասիրողը եղաւ, եկաւ այն եզրակացութեան, թէ Լէոնարդօն, Միլան մեկնելուց առաջ, ճամբորդել էր Արեւելքում, գլխաւորապէս Փոքր Ասիայում, որոշ աշխատանքներ կատարելու, հաւանաբար իբրեւ ճարտարագէտ, Եգիպտոսի սուլթանի համար:

Այդ իր եզրակացութիւնը անմիջապէս եւ բուռն կերպով հերքեց մի շարք իտալացի պատմաբանների կողմից, այն հիման վրայ, որ Լէոնարդոյի կեանքը մանրամասն կերպով եւ տարիէ-տարի ուսումնասիրւած է, եւ ոչ մի նշան չի գտնւած երկրից նրա հեռանալու մասին:

Փամանակագրական փաստերի վրայ հիմնւած, հերքելու այդ փորձը պէտք է համարել միանգամայն անկայուն եւ

բռնագբօսիկ: Մեկցիի տան ձեռագիրները գտնելուց առաջ ոչ ոք դադափար իսկ չունէր, որ Լէոնարդօն ճիշտ այդպիսի մի պաշտօն էր վարել Յեզար Բորջիայի մօտ: Լէոնարդօն լուակեաց, ինքը իր մէջ փակւած մարդ էր եւ իր կեանքի մասին խօսել չէր սիրում:

Ճշմարտութիւնը այն է, որ մենք շատ քիչ բան գիտենք Լէոնարդոյի կեանքի մասին մինչեւ նրա երեսուն տարեկանը:

Իր կեանքի այդ շրջանին, նա թափառել էր մի տեղից ուրիշ տեղ, միշտ որոնելով մի վայր, մի երկիր, ուր նրան Հնարաւորութիւն տրւէր իրագործելու իր բազմաթիւ ծրագիրները: Բաւ է յիշել իր հոչակաւոր նամակը՝ ուղղւած Լուդովիկօ Սֆորցային, որի մէջ նա գրում էր այն բազմաթիւ եւ բազմատեսակ գործերը, որ նա ի վիճակի էր կատարելու:

Քննենք, կէտ առ կէտ, այն առարկութիւնները, որ առհասարակ գործ են ածում Հերքելու Համար Լէոնարդոյի ճամբորդութիւնը դէպի Արեւելք:

Նախ այն, որ Լէոնարդօն չէր կարող բացակայել երկրից, Միլանում Սֆորցայի [մօտ] ծառայութեան մտնելուց առաջ, որովհետեւ փաստօրէն Հաստատւած է իր ներկայութիւնը Ֆլորանսում 1472-ին, 75-ին, 76-ին եւ 81-ին: Նա Միլանում էր 1483-ին, ինչպէս նաեւ 1487-ին: Այդ միանգամայն ճիշտ է, սակայն ոչ մի բացատրութիւն չի տրւում այն բացերի Համար, որ մնում են մէջբերած թւականների միջեւ:

Նաեւ առարկում են, որ այդ ժամանակներում դէպի Արեւելք ճամբորդելու Համար պէտք էր վատնել տարիներ: Այսօր մենք գիտենք, որ այդ կարծիքը սխալ է: Կարելի էր Փոքր Ասիայի ափերը Հասնել մէկ ամսւայ մէջ, եւ եթէ անհրաժեշտ էր, նոյնիսկ աւելի արագ:

Օրինակի Համար, յայտնի է, որ երբ Ֆլորանսի Մայր եկեղեցում տեղի ունեցաւ Մեղիչիների դէմ սարքւած դաւադրութիւնը, որի ընթացքին Ջուլիանօն սպանւեց եւ Լորենցօն Հազիւ կարողացաւ ազատել իր կեանքը, Բերնարդօ Բանդինին՝ գլխաւոր դաւադիրը, փախաւ Կոստանդնուպոլիս: Լորենցօն

պահանջեց սուլթանից դաւադիրը անմիջապէս յանձնել իր դեսպանին, ինչ որ սուլթանը կատարեց, եւ Բանդինին վերադարձեց Ֆլորանս 15 օրւայ ընթացքին:

Ինչպէս յայտնի է, Բանդինին կախեց Բարջելլոյի պատից եւ, իբրեւ վկայութիւն, մեզ մնացել է Լէոնարդոյի տպաւորիչ մէկ գծագրութիւնը:

Պէտք է մոռանալ, որ հաղորդակցութիւնները Միջին Արեւելքի եւ Ֆլորանսի միջեւ շատ լաւ կազմակերպւած էին այն օրւանից ի վեր, երբ Ֆլորանսի հանրապետութիւնը տէրը դարձաւ Պիզա քաղաքին եւ գնել էր Լիվորնօ նաւամատոյցը: Նա կազմեց առաջնակարգ նաւային տորմիդ, որի նաւերը անդադար եւ կանոնաւոր կերպով երթեւեկում էին, արտածում եւ ներմուծում ապրանքներ եւ տեղափոխում մեծ թւով ճամբորդներ: Դիւրին բան էր Լէոնարդոյի համար օգտուել այդ յարմարութիւններից եւ մի քանի ամսով բացակայել, առանց որ այդ յայտնի լինի ուրիշներին:

Ի՞նչ էին պատճառները, որ նրան մղեցին այդպիսի արկածախնդրութեան:

Դա մի կարեւոր հարց է, որ պէտք է քննել մանրամասնօրէն:

Այն օրւանից ի վեր, երբ Լէոնարդօն լքեց ընտանեկան տանիքը եւ գնաց աշակերտելու հռչակաւոր Վերոքիոյին, նա մտաւ իր կեանքի ամենաբախտաւոր շրջաններից մէկը:

Վայելուչ, բարեկազմ, խնամքով հագւած, տաղանդով լեցուն, խելացի, կատարեալ կերպ ու վարքով երիտասարդ էր, արժանի ամենքի հիացման եւ յարգանքին: Նրա առանձնայատուկ մտային կարողութիւնները, գեղեցիկ ձայնը, երաժշտական ձիրքը՝ բացի իր նկարչական եւ քանդակագործական մեծ տաղանդից՝ նրա առջեւ բաց էին արել Մեդիչիների պալատի դռները, ուր նրանով մեծապէս հիանում էին եւ ամեն կերպ քաջալերում իր արւեստը:

Նա իսկապէս եզակի մի անձնաւորութիւն էր: Ազնւական, վերին աստիճան քաղաքավարի, զուսպ, անկախ, ներքնապէս

Հպարտ, արտաքնապէս մեղմ, նուրբ, կատարեալ շարժուձեւերով, վեհանձն: Նա Վերածննդեան շրջանի այն տիպարն էր, որոնց մասին գրել էր Բալդասար Կաստիլիոնէն:

Վազարին մեզ պատմում է, որ նա միանգամայն անշահախնդիր էր եւ նիւթական արժէքներին ոչ մի նշանակութիւն չէր տալիս: Նա սիրում էր խելացի եւ ընտրեալ մարդկանց ընկերութիւնը: Ձիեր էր պահում եւ զանազան տեսակ կենդանիներ: Իր գիշերները անցընում էր նւագելով եւ յօրինելով գեղեցիկ երգեր եւ մոտետներ, որոնցից մի քանիսը Հասել են մեզ: Ու նաեւ, երկար ժամերով սիրում էր վիճաբանել արւեստի եւ գիտութեան հետ կապւած հարցերի մասին:

Կեանքը Ֆլորանսում, Լէոնարդոյի ժամանակ, լեցուն էր բերկրանքով եւ նաեւ ամեն տեսակ վտանգներով: Մեղիչիների միահեծան ռեժիմի շրջանին նախանձը, ատելութիւնը, դաւասիրութիւնը, բամբասանքը, վրէժը ընդհանուր երեւոյթներ էին:

Մեծ հանճարներ, մեծ գործեր, վեհանձնութեան մեծ թեստեր, մեծ եւ անհամար մսխումներ, բայց նաեւ՝ անհանդուրժելի, աններող, բիրտ մոլեռանդութիւն, վրիժառութիւն եւ անիրաւ պատիժներ: Բեֆֆան, այսինքն՝ բամբասանքը, ստորնացումը ընդհանրացած գէնքեր էին, որ անխիղճ, անբարոյական, բթամիտ մարդիկ գործ էին ածում օժտւած ընտրեալներին իրենց պատւանդանից վայր նետելու համար:

Չնայած տիրող ընդհանուր բարոյական խառնաչփոթութեան եւ անիշխանականութեան, փոքրիկ մարդիկ՝ մանրատաղանդ նկարիչներ եւ արհեստաւորներ՝ հազար բաներ էին հնարում, հազար սուտերի էին դիմում ուրիշները վարկաբեկելու համար:

Քաղաքի մութ անկիւններում, նեղ փողոցների շուքերի տակ համախմբւած՝ փոքր անհատները փսփսում էին լաւագոյնների դէմ, հնարովի բաներ պատմում եւ աշխատում արատաւորել նրանց:

Դա բնականոն մի ախտ էր, որ կեանքը դարձնում էր անախորժ եւ երբեմն անտանելի:

Ու հասկանալի է, որ Ֆլորանսուժ կային բազմաթիւ անձնաւորութիւններ, որոնք չէին կարողանում տանել Լէոնարդոյի հանճարը եւ յաջողութիւնները:

Այդ ոչ օրինաւոր կապից ծնւած անհարազատը, սուերի տակ իր ամօթը ծածկելու տեղ, ընդհակառակը, ամեն տեղ ցուցադրում էր իր հանճարը, իր բազմակողմանի կարողութիւնները, իր ազնւականութիւնը, իր վայելչութիւնը եւ հասել էր նախանձելի դիրքերի: Նա միշտ շրջապատւած էր փայլուն անհատներով եւ չնայած, որ մեծ ապարանքների եւ հարստութիւնների սեփականատէր չէր, իրեն թոյլ էր տալիս լայն եւ անհաշւելի մսխումներ անել:

Պէտք է պնդել այդ կէտի վրայ, որովհետեւ, ըստ ինձ, այդ մթնոլորտի խեղդիչ եւ աւերիչ ազդակներն էին, որ նրան մղեցին երկիրը լքել եւ մեկնել մինչեւ Հայաստան:

Այդ պարագան, ընդհանրապէս, անտեսել է:

Լէոնարդոյի դէմ մղւած նախանձոտ եւ ծածուկ պայքարը հասաւ այն աստիճանին, որ 1475-ին, ապրիլ ամսին, մի խումբ անպատասխանատու մարդկանց մատնումով Բարտեւեմէօ Պասկինին, Բաչինին, Լէոնարդո Տորնարուօնին՝ Լորենցօ Մեդիչիի կնոջ մօտիկ ազգականը, եւ Լէոնարդօ դա Վինչին դատարան կանչւեցին իրենց յուրի վարքի համար: Ապրիլի 9-ին յանցաւորները ներկայացան Սան Մարկոյի դատաւորների առջեւ, բայց անմիջապէս ազատ արձակւեցին, երբ դատարանը նրանց արդարացնող անժխտելի տեղեկութիւններ ստացաւ:

Այդ դատավարութիւնը՝ քստմնելի թշնամութեան ցածր արարք, թէպէտ օրինական ոչ մի հետեւանք չունեցաւ, բայց խորապէս ցնցեց մեծ նկարչի կեանքը եւ նրան նետեց դառնութեան եւ յուսահատութեան ճիրանների մէջ: Նա կորցրեց իր մտքի հանգստութիւնը եւ ստեղծագործական թափը:

Այդ է, անշուշտ, պատճառը, որ Ֆլորանսեան կեանքի իր վերջին շրջանին, նա արտադրեց շատ քիչ, չնայած որ աշխատանքը շատ էր, եւ միւս արւեստագէտները փութով ծածկում

էին հարուստ ապարանքների եւ եկեղեցիների պատերը բազմաթիւ նկարներով:

Այլապէս ինչո՞վ կարելի է բացատրել, որ Լէոնարդօ դա Վինչիի նման գերագանցապէս օժտւած մէկը պատահութիւն իսկ չէր ունեցել ապսպրանքներ ստանալու եւ արտադրելու մի որեւէ կարեւոր դործ: Նա, ինչպէս կարելի է ենթադրել, ցանկութիւն իսկ չունէր նկարելու, որովհետեւ նա Լորենցոյի իսկ ապսպրած նկարը, զարգարելու համար Պալացցօ դելլա Սինեորիայի Սուրբ Բերնարդի մատուռը, թողեց չգործադրւած:

Խորիստ բնաւորութեան տէր մարդ, Լէոնարդօն սովորութիւն չունէր գանգատելու իր աննախանձելի նիւթական վիճակի մասին: Նա անկասկած նեղութեան մէջ էր եւ անկարող ծածկելու իր ծախսերը: Մեզ յայտնի է, օրինակի համար, որ նա ստիպւած էր դիմելու Սան Դոնատօ վանքի կրօնաւորներին փոքրիկ նախավճարի համար, որպէսզի կարողանայ գնել ներկեր, վանքում իր սկսած նկարը շարունակելու համար: Բայց այդ նկարն էլ նա երբեք չվերջացրեց:

Որպէսզի Լէոնարդոյի այդ շրջանի հոգեբանական վիճակը լիովին հասկանանք, բաւ է քննել այն տրամադրութիւնը, որի մէջ նա գտնուում էր, երբ սկսեց Սուրբ Հերոնիմոսի պատառը, որը ողբալի արկածներից յետոյ, այժմ կախւած է Վատիկանի նկարչական թանգարանում, անաւարտ վիճակում:

Այդ նկարը անհերքելի եւ վճռական կերպով բնորոշում է նրա հոգեկան ճնշւածութիւնը եւ յուսահատութիւնը:

Սուրբ Հերոնիմոսը՝ մերկացած մի ծերութիւն, աւելի շուտ ծածկւած մի կմախք, քան կենդանի արարած՝ խոր ընկած աչքերով, ծումուած շրթունքներով, գրեթէ օրհասական վիճակում, վեր է բարձրացնում իր ոսկրոտ բազուկը՝ կռփելու համար ողորմելի եւ վէրքերով ծածկւած կրծքին: Նրա այրուող աչքերը կարծես պաղատում են երկնային ուժերի միջամտութեան, մինչ կէս բացւած բերանից դուրս է ժայթքում պաղատանքի եւ սարսափի մի աղաղակ:

Նրա ոտքերի տակ պառկած է, արքայական դիրքով ծալ-
լած, մի փառաւոր առիւծ, պոչը կամարի նման ոլորած: Գա-
զանի մոռնոցը կարծես կոչւած է դեռ աւելի սաստկացնելու
ծերունու աղաղակը: Շուքերը ծանրօրէն ծածկում են երկուսի
կերպարանքները, ստեղծելով խեղդիչ, բանտային մի մթնո-
լորտ:

Այդ հզօր եւ անաւարտ նկարը մեզ բացատրում է ամեն
ինչ: Սուրբ Հերոնիմոսը անկասկած արտայայտում է արեւս-
տագէտի հոգեկան վիճակը Ֆլորանսում, որ նրա համար այ-
լեւս անհանդուրժելի բանտ էր, որտեղից պէտք էր դուրս գալ:
Մոռնացող առիւծը յատկանշում է նրա վիրաւորւած հպար-
տութիւնը:

Լէոնարդօն անհունօրէն մենակ էր, դժբախտ եւ զզւած:
Նրա միակ մտահոգութիւնն էր փախչել քաղաքից, դուրս գալ
այդ խեղդիչ մթնոլորտից, գտնել իր ազատութիւնը:

Մեքենաբար շարունակում էր իր ամենօրեայ լինելիութիւ-
նը: Հանդիպում էր հին ծանօթներին, տեսնում էր արեւս-
տագէտների եւ արհեստաւորների հետ, որոնց քմծիծաղով
եւ կեղծաւորութեամբ ծածկւած դէմքերը իրեն համար ան-
հանդուրժելի էին: Ձէր կարող, նաեւ, խոսափել տեսնելու
առեւտրականների եւ վաճառականների կոպիտ եւ ամբար-
տաւան երեսները կամ Պիացցա Սինեորիայում խումբ-խումբ
ժողովւած մտաւորականներին, որոնք բարբառում էին դասա-
կան արեւստի եւ Դանտէի պոէմի մասին:

Այդ անում էր ականայ, ստիպւած, բայց զզւանքով:

Ոչ ոք չուներ: Իր բուն հայրը, որ ապրում էր երրորդ կնոջ
հետ, շատ քիչ էր շահագրգռւած նրանով: Չնայած իր հարս-
տութեան, դրամ տալու տեղ խորհուրդներ էր տալիս: Մայրը՝
տգէտ գիւղացի մի կին՝ իր վերջին օրերը անցընում էր ծննդա-
վայր իր գիւղում եւ ոչ մի բարոյական օժանդակութիւն չէր
կարող նրան տալ:

Ձէ, ոչ ոք չուներ: Ամբողջովին չէզոքացած էր:

Միակ էլքը փախուստն էր: Պէտք էր ընդմիշտ թողնել կոպիտ եւ տղէտ առեւտրականներով եւ նոյնքան տղէտ կղերականներով լեցւած այդ քաղաքը:

Անշուշտ, նոյն Իտալիայում աշխատանքի վայրերը չէին պակասում: Պապ Սիստօ Չորրորդը, մեծ, շինարար աշխատանքներ էր ձեռնարկել, եւ Բոտիչելլին ու Պերուջինօն նկարում էին նրա համար: Նոյնպէս, Ուրբինոյի դուքսը, Մանտովայի մարկեզը, Վենետիկի դոժը, Միլանոյի ռեգենտը պարապ չէին նստած եւ քաջալերում էին մի շարք արւեստագէտներին:

Լսել էր նաեւ, որ մի շարք արւեստագէտներ գնացել էին շատ հեռուները՝ Եգիպտոս, Սուրիա, Ռուսաստան, Տաճկաստան, ինչպէս օրինակի համար Միքելոնցցօն, Արիստոտել դի Ֆիորավանտին, Ժենտիլէ Բելլինին եւ բազմաթիւ ուրիշներ: Նոյն ինքը Միքէլանջելօն հրաւիրւած էր Կոստանդնուպոլիս շինելու համար Ղալաթիայի կամուրջը:

Ինքն էլ աւելի պիտի նախընտրէր մեկնել հեռաւոր մի երկիր: Նոր աշխարհ, նոր միջավայր, նոր մարդիկ, նոր տպաւորութիւններ: Պէտք ունէր մոռանալու եւ թարմանալու:

Եւ երբ որոշեց մեկնել մի հեռաւոր երկիր, հարց է ծագում, ինչու նա ընտրեց Հայաստանը, էրմինիա, ինչպէս ինքը գրում է: Չէ՞ որ Հայաստանը այլեւս անկախ չէր եւ Կիլիկեան մասը անցել էր Եգիպտոսին: Եւ, սակայն, ամբողջ իր գրւածքի մէջ նա միշտ շեշտում է էրմինիա անունը եւ անտեսում է Եգիպտոսի անունը:

Հարցը նրանումն է – եւ օտար քննադատները այդ ամբողջովին անտեսել են – որ հայերը Ֆլորանսում շատ աւելի մեծ ժողովրդականութիւն էին վայելում, քան առհասարակ կարծւում է:

Նախ, Ֆլորանսին տիրապետող այն գեղեցիկ բլուրը, որի վրայ կանգնած էր մի սքանչելի բազիլիկա, եւ ուր ինքը Լէօնարդօն սիրում էր ժամերով նստել եւ դիտել բնութեան երեւոյթները, կրում էր Սան Մինիատօ անունը, իտալացրած, որովհետեւ Միջին դարերում նա իսկապէս կոչւում էր Սան Մինիատօ: Այդ սուրբը հայ էր եւ նա էր, որ 250-ին, մտցրել էր քրիստոնէութիւնը Տոսկանիայում, մարտիրոսանալով:

Երիտասարդ Հասակից Լէոնարդօն սովորութիւն էր ունեցել մտնել այդ բազիլիկայի ներսը, դիտել բազմաթիւ խճանկարները եւ, մանաւանդ, այն մէկը, որ զարդարում էր աւագ սեղանի գլուխը, ուր ներկայացւած էր սուրբը եւ որի վրայ, ոսկէ տառերով գրւած էր «Սան Մինիատօ Ռեքս էրմինիա»:

Այնտեղ էր նաեւ, ուր նա Հանդիպում էր եկեղեցու ետեւում գտնուող վանքի վարդապետներին, որոնք, ըստ Հայր Լուգանոյի, Հայեր էին: Այդ երկար մօրուքով եւ փայլուն աչքերով կրօնաւորները, Հաւանական է, որ պատմում էին իրենց ստիպողական կերպով լքած Հայրենիքի մասին, նրա դժբախտութիւնների, բարքերի եւ գեղեցկութիւնների մասին եւ նաեւ այն պայքարի մասին, որ իրենց ժողովուրդը մղած է իրեն Հաւատքը պաշտպանելու Համար:

Բացի դրանից, Հայերին կարելի էր Հանդիպել ամեն քայլափոխին: Չէ՞ որ Հայերը Իտալիայում շինել էին մօտ 34 եկեղեցիներ եւ վանքեր եւ տւել էին այդ երկրին 11 սրբեր:

Չնայած դրան, իտալացիները Արեւելքից, մանաւանդ Բիւզանդիայից եկած այդ բազմութիւնները շփոթում էին: Բոլոր արեւելցիներին անւանում էին գրեչի, յոյներ, եւ դեռ մինչեւ այսօր Ֆլորանսում գոյութիւն ունի Միջին դարերից մնացած մի փոզոց, որ կոչւում է Վիա Դէի Գրեչի: Այդ այն փոզոցն է, ուր Արեւելքից եկած բազմաթիւ արեւեստագէտներ՝ յոյներ եւ մանաւանդ կիլիկիացի Հայեր, ունէին իրենց բոսեզաները, աշխատանոցները, ուր արտադրում էին նկարչական գործեր եւ գոհարեղէններ: Այդ նկարիչներն էին՝ Դուչչոյից առաջ՝ ամբողջ մի նկարչական դպրոց ստեղծողները:

Այո, անկասկած, Լէոնարդօն ճանաչում էր Հայերին:

Նա, որ յաճախում էր Պղատոնական ակադեմիան, Հաւանական է, Հանդիպել էր եւ զրուցել Գրիգորիօ Տրապիզոնցու Հետ, յոյն, բայց Հայագէտ այդ կարկառուն անձնաւորութեան, որ դասախօսում էր Ֆլորանսում, գրում շատ արժէքաւոր գրքեր Պղատոնի եւ Արիստոտելեսի մասին, մասնակցում ակադեմիայի վիճաբանութիւններին եւ պաշտպանում Դաւիթ Անյաղթի եւ Տաթեւի վանքի փիլիսոփայական տեսութիւնները:

Հայաստանը ժամանակին կարեւոր վաճառականական փոխյարաբերութիւնները մէջ էր Վենետիկի, Պիզայի, Յլորանսի հետ, եւ նրա վերջին թագաւորի ողբերգական արկածները դեռ ամենքի յիշողութեան մէջ էին:

Քիչ առաջ, Եգիպտոսից եւ Տաճկաստանից դեսպաններ էին եկել եւ այդ բարբարոսների թարգմանիչները Հայեր էին: Դա Վինչին նրանց հետ հաւանաբար խօսել էր եւ տեղեկութիւններ ուզել նրանց երկրների մասին: Այդ թարգմանիչներից մէկը, Բարթողիմէոս անունով կիլիկիացի, Յլորանսից էր անցել, Յեզարէ Բորջիայի մօտ գնալու համար: Արդեօք նա չէ՞ր, որից Լէոնարդօն տեղեկութիւններ էր առել Կիլիկիայի մասին, եւ նոյնիսկ նա չէ՞ր, որ յաջողացրել էր մի գործ ճարելու Եգիպտոսի սուլթանի մօտ:

Ապա նաեւ, պէտք չէ մոռանալ, որ հարուստ ընտանիքների գրեթէ բոլոր ծառաները արեւելցիներ էին: Մեծ մասամբ գնւած ստրուկներ: Հայերը գերծ էին ստրուկութիւնից, որովհետեւ արգելւած էր քրիստոնեաներին ստրուկ դարձնելը: Բայց Լէոնարդօն նրանց հանդիպում էր ամեն տեղ եւ հետաքրքիր, ինչպիսին էր, հարցաքննում էր նրանց, գուցէ եւ նկարում:

Դր. Ռիխտերը, որ ինչպէս ասացի, առաջինն է եղել այդ ճամբորդութեան մասին գրողը, հիմնւելով Ատլանտեան մատեանի տւեալների վրայ, կարծում էր, որ Դա Վինչին մի որոշ ժամանակ Եգիպտոսի սուլթանի մօտ ծառայութեան մէջ է եղել իբրեւ ճարտարագէտ:

էդուարդ Մակ Կորտին, Ստրօիգովսկին, Կլեմենտէ Տուզարօն շատ բնական են գտնում այդ ենթադրութիւնը, աչքի առաջ ունենալով այն շրջանի Լէոնարդոյի յուսահատութիւնը եւ դժւարին նիւթական վիճակը:

Ես պիտի ուզէի աւելացնել մի ուրիշ տւեալ, որի վրայ անհրաժեշտ ուշադրութիւն չեն դարձրել Դա Վինչիի ուսումնասիրողները: Կան շատ նշաններ, որ նա, ինչպէս Վերածննդեան շրջանի ուրիշ բազմաթիւ մտաւորականներ, պատկանում էր Արեւելքից ներմուծած որոշ կրօնա-փրկիսո-

փայտական մի հոսանքի՝ ծածկված եւ գաղտնի կերպով քարոզված:

Մի ժամանակ նոյնիսկ կարծւում էր, որ մահամեղականութիւն էր ընդունել: Բայց այդ միանգամայն եւ արդար կերպով հերքեց: Սակայն ճշմարտութիւնից հեռու չենք լինի, եթէ ասենք, որ ձեռագիրները ուշադիր ուսումնասիրութիւնը մեզ մղում է կարծելու, որ նա իսկապէս պատկանած է որոշ միտիկ, նոր մարգարէութիւն քարոզող մի հոսանքի:

Այդպիսի քարոզչութիւնները ընթացիկ էին: Ծածուկ կոչված գիտութիւնները ամենօրեայ հաց էին: Մաքիավելլին, որ վերին աստիճանի ուշալիստ մի մարդ էր, որ յոռետես էր առհասարակ կրօնի վերաբերմամբ, այնուամենայնիւ գտնում էր, «որ օդը լեցուն է ոգիներով եւ որ նա հաւատում է, որ մեծ դէպքերը արդիւնք են հրաշագործ ոգիների, մարգարէների, յայտնութիւնների եւ երկնային նշանների»:

Մարսելիօ Ֆիչինօն, յոյն այդ փիլիսոփան, որ Պլատոնեան ակադեմիայի ամենակենտրոնական անձնաւորութիւնն էր եւ հիմնադրողը, գրքեր էր գրել պաշտպանելու համար գուշակութիւնները, մոգութիւնը եւ սատանէպապաշտութիւնը: Պիկօ դելլա Միրանդոլային ուղղված մի նամակում ներողութիւն էր խնդրում, որ ի վիճակի չպիտի լինի նրան այցելելու, «որովհետեւ աստղերը նպաստաւոր դասաւորման մէջ չէին գտնւում այդ օրը»:

Ագոստինօ Նիֆոնը – Ֆիչինոյի լաւագոյն աշակերտը – իր գրածքներում քարոզում էր.

«Մենք պէտք է խօսենք ինչպէս ամենքը, մենք պիտի մտածենք ինչպէս քիչերը»:

Լէոնարդոյի ձեռագիրները ուրիշ բան չեն, եթէ ոչ այդ սկզբունքի կիրառումը:

Գանք այդ ձեռագիրներին:

Ատլանտեան մատեանը, որ մեր շահագրգռածութեան գլխաւոր առարկան է, պարունակում է զանազան ծրագիրներ, նամակների ձեռով ուղղված «Սուրիայի Դավադարին, Բաբելոնի տեղապահ սրբազան Սուլթանին», որոնց մէջ նա

խոստանում է նկարագրել ինչ-որ տեղի ունեցած աղէտի պատճառները եւ հետեւանքները: Ապա նա գրում է.

«Գտնելով Հայաստանի այս կողմում, սիրով եւ խնամքով վերջացնելու համար այն գործը, որի համար դուք ինձ դրկել էք, ես, որպէսզի նախաձեռնեմ այդ մասի աշխատանքները, որ անհրաժեշտ են մեր գործը ի գլուխ բերելու համար, մտայ Կալինդրա քաղաքը, մեր սահմանների մօտը, Տաւրոսեան լեռների այս կողմի ծովափում, Եփրատից բաժանւած եւ ի տես Մեծ Տաւրոսի, որ ցցւած է արեւմտեան կողմում»:

Ըստ աշխարհագէտ Յրեքֆիլդի, այս քաղաքը, հաւանաբար, Կիլիկիայում գտնւող Կալինդրա կոչւող վայրն է, որ Միջին դարերում կոչւում է Կիլինդրահ: Դրա մասին Լէոնարդօն յիշում է նաեւ Վինձորի ձեռագրում, ինչ որ ցոյց է տալիս, որ դա անձնական մի յիշատակ էր:

Ապա անմիջապէս մենք հանդիպում ենք Վեներայի տաճարի նկարագրութեան: Նա գրում է.

«Կիլիկիայի ծովեզերքից դէպի արեւմուտքի կողմը, ձեր առջեւ բացւում է Կիպրոս կղզին»:

Էջի հակառակ կողմում նա նորից հաստատում է այդ երեւումը Կիլիկիայի արեւելեան ծովեզերքից:

Նրանք, որ ճանաչում են Կիպրոսը, գիտեն, որ դեռ մինչեւ այսօր, Կուկլիս կոչւած վայրում, կարելի է տեսնել Վեներայի հոչակաւոր տաճարի մնացորդները: Այդ տաճարը, ըստ առասպելական աւանդութեան, շինւած է այն վայրում, ուր ծովի փրփուրից ծնել է Սիրոյ եւ Գեղեցկութեան աստուածուհին Աֆրոդիտէն: Այդ մասին յիշում է հոմերոսեան դիցերգութեան մէջ. ամեն գարնան, հին դարերից ի վեր ահագին բազմութիւններ էին գալիս փառաբանելու սիրւած աստուածուհուն:

Արդ, իմ երկու այցելութիւններիս ընթացքին, ես տեսել եմ, որ Կիլիկեան ափերը պարզ երեւում են, ուստի պատճառ չկայ մտածելու, որ հակառակ կողմից նոյնը չէ:

Աւելի յետոյ Դա Վինչին նկարագրում է Տաւրոսեան լեռները: Նա ճշգրիտ դիտումներ է անում արեւի ճառագայթ-

ների մասին, որ լուսաւորում են լեռների արեւելեան կողմը՝ չորս ժամ արշալոյսից առաջ: Նա խօսում է ներուժ այն ճերմակութեան մասին, որ պատճառում է այդ լուսաւորութիւնը եւ հայերին ներկայանում է, ինչպէս մութում տարածւող լուսնային շողացում: Ըստ իրեն, այդ երեւոյթի պատճառը կրաքարն է, որ ահագին քանակութեամբ փռւած է Տաւրոսեան լեռնաշղթայում:

Դր. Ռիխտերի հետազօտութիւնները այդ երեւոյթը միանգամայն հաստատում են:

«Լեռան գագաթը, — շարունակում է Լէոնարդօն, — արեւմտեան մասերում, ուր արեւը շարունակում է լուսաւորել մայր մտնելուց յետոյ, գիշերւայ երրորդ մասում»: Ինչպէս երեւում է, նա այդ դիտել է Դավադարի հետ միասին, որովհետեւ աւելացնում է.

«Այն, ինչ որ ձեզ հետ միասին դիտելու ժամանակ կարծում էիք, որ գիսաւոր է, մութում անդադար փոփոխւող, երկուերեք մասի բաժանւող կամ ձգւող եւ կարճացող, իրականի մէջ հորիզոնի վրայ ազդող ճանկերն են, որ թափանցելով լեռների եւ արեւի մէջ, կտրում են ճառագայթների որոշ մասերը»:

Այդ բացատրութիւնը տիպական է Լէոնարդոյի մտայնութեան համար, որ միշտ, մեծ լարւածութեամբ, սովոր է որոնելու բնութեան եզակի երեւոյթները:

Ձեռագրի այդ նոյն էջի վարի մասը նա անւանում է «Հայկական նամակներ»: Դրան կից՝ լեռնային տեսարանի մի գծագրութիւն, որ երեւի կոչւած է լուսաբանելու իր գրւածքը:

Էջի աջ կողմում՝ մի շարք կարճ նախադասութիւններ, «Գրքի բաժանումը» տիտղոսի տակ:

Այստեղ մենք հանդիպում ենք վերին աստիճանի նշանակալից մի կէտի. Լէոնարդօն Հայաստանից ստացած ամբողջ իր տպաւորութիւնները, իր ապրումները, իր չարչարանքները նաեւ, մտադիր էր վերածելու ամբողջական մի գրքի, որի մէջ հայ ժողովրդի տանջանքները պիտի պաստառ ծառայէին մի հսկայական կրօնա-փիլիսոփայական, գրեթէ բիբլիական աշխարհայեացքի:

Մի շարք դէպքեր պիտի բոլորէին դժբախտութիւններ եւ աւերումներ նախատեսող մի առաքեալի շուրջը, որին նախ հայերը արգելափակել էին, ապա ազատ արձակել, երբ տեսել էին, որ նրա մարգարէութիւնները կատարուում են: Այստեղ, ինչպէս երեւում է, նա պիտի բացատրէր, ըստ իր միաստիկ տեսութեան, հայ ժողովրդի չարչարանքների պատճառները եւ նաեւ մեծ պատկերացումներով նկարագրէր նրա ողբերգութիւնը:

Ահա այդ ծրագիրը:

«Քարոզչութիւնը եւ հաւատքի հաստատումը»:

«Ողողումը մինչեւ իր վերջաւորութիւնը»:

«Քաղաքի աւերումը»:

«Ժողովրդի մահը եւ յուսահատութիւնը»:

«Մարգարէի հետապնդումը, իր ազատագրումը եւ գթութիւնը»:

«Նկարագրութիւն լեռան պատճառած աւերման»:

«Հասցրած վնասը»:

«Զիւնի քանդիչ ուժը»:

«Մարգարէի գիւտը»:

«Նրա մարգարէութիւնը»:

«Հայաստանի արեւմտեան վարի մասի ողողումը, որ առաջ եկած է Տաւրոս լեռան ճեղքածքի պատճառով»:

«Ինչպէս է, որ նոր առաքեալը ապացուցում է, որ ամբողջ այդ աւերումը տեղի է ունեցել, ինչպէս ինքը նախատեսած էր»:

Վերջին երեք մասերում նա գրում է.

«Արեւելեան Հայաստանի վարի մասի ողողումը, որին ցամաքեցնելու համար անհրաժեշտ է ճանապարհ բանալ Տաւրոսեան լեռների միջից»:

Աւելի վարում.

«Ինչպէս է, որ նոր առաքեալը ցոյց տւեց, որ այդ փլուզումը տեղի ունեցաւ ճիշտ այնպէս, ինչպէս ինքը նախատեսել էր»:

Ապա տալիս է լեռների եւ Եփրատի նկարագրութիւնը:

Դեռ աւելի վարը, նա տալիս է անձնական մի բացատրութիւն ձեռնարկած աշխատութիւնների ուշացման առթիւ:

Նա ուշացել է, որովհետեւ.

«Դիտում էր եւ մանրամասն քննում այդպիսի մեծ եւ ապ-
շեցուցիչ հետեւանքները տեղի ունեցած աւերման»:

«Անկարելի էր գործի անցնել առանց սպասելու, որ որոշ
ժամանակ անցնի: Դավադարը չպէտք է բարկանայ իր գործի
ուշացման համար, որովհետեւ իր ցանկութիւնը իրականացնե-
լու համար, պէտք է մտածել, ամեն ինչ պարզել եւ այդ ժամա-
նակի պէտք ունի»:

Եթէ այս է, – իրավացիօրէն նկատում է Մակ Կորտին, – որ
պրոֆ. Գոլլին անւանում է վէպ, պէտք է ընդունել, որ այդ վէ-
պը գուրկ էր որեւէ զգացողական շահագրգռութիւնից:

Միշտ դիմելով Դավադարին, Լէոնարդօն շարունակում է.

«Առայժմ ես պիտի խոսսափեմ Փոքր Ասիայի նկարագրու-
թիւնը տալու, մատնանշելու այն ծովերը եւ հողերը, որ շրջա-
պատում են նրան, որովհետեւ ես գիտեմ, որ ձեր արած ջան-
քերի եւ հաշիւների շնորհիւ, դուք որոշ կերպով գաղափար էք
կազմել այդ հարցի մասին»:

Այդ տողերին յաջորդում են մէջբերումներ այն տեղեկու-
թիւններից, որ նա ստացել է տեղական բնակիչներից, գլխաւո-
րապէս Կասպեան ծովի եւ լեռների վերաբերեալ:

Ապա գալիս են բնական երեւոյթների նկարագրութիւննե-
րը: Նա խօսում է Տաւրոսեան լեռան ստեբրների փոփոխական
երկայնութեան մասին: Ակնարկութիւններ է տալիս ճամբոր-
դութեան տեւողութիւնների մասին: «Տասներկու օր մինչեւ
Սարմատիայի սահմանները, յունիս ամիս», «Մինչեւ Հիպեր-
բորեան լեռները, դեկտեմբերին, մի ամսւայ ճամբորդութիւն է,
դէպի հիւսիս»:

Դրանք տեղեկութիւններ են, որ անկասկած նրան հաղոր-
դել են տեղական բնակիչները, այսինքն, ըստ դր. Ռիխտերի,
Կասպեան ծովի եզերքի բնակիչները:

Եւ, առհասարակ, նրա տւած տեղեկութիւնները պարզ են
եւ անմիջական եւ կասկած չկայ, որ դրանք իր անձնական
փորձառութեան արդիւնքներն են:

Ահաւասիկ մի ուրիշ մէջբերում.

«Այս լաւ ջրլած հովիտները բնակւած են հարուստ բնակիչներով, նրանք լեցուն են աղբիւրներով, գետերով եւ ծածկւած են աներեւակայելի բուսականութիւնով, մանաւանդ հարաւային կողմերում»:

Նա գրում է, թէ ինչպէս է, որ բուսականութիւնը փոփոխութեան է ենթարկւում լեռան զանազան մասերում, մինչեւ տեւական ճիւղի շրջանները: Լեռան գագաթի չորութիւնը եւ ամայութիւնը նկարագրւած են ուժգին, նկարչական շեշտով: «Կէս ճանապարհի վրայ, օդը կիզիչ է, – շարունակում է նա, – երբեմն ոչ մի քամի չի փչում: Ոչ մի բան չի կարող այնտեղ երկար ապրել, ոչ մի բան գոյութիւն ունի, բացի գիշատիչ թռչուններից, որ ապրում են Տաւրոսեան բարձր ճեղքւածքներում եւ իջնում են ամպերի տակ՝ հետապնդելու համար լեռան խորածածկ կողերում ապաստանած գոհերին: Այստեղ ամեն ինչ ժայռ է, այսինքն ամպերից մինչեւ վեր բարձրութիւն, եւ այդ ժայռերը շլացուցիչ կերպով ճերմակ են: Ոչ ոք ի վիճակի չէ բարձրանալու մինչեւ բարձրանիստ գագաթը, քարքարոտ եւ վտանգաւոր ճանապարհի պատճառով»:

Երբ մարդ կարդում է այդ նկարագրութեան բնագիրը, տպաւորութիւնը վերին աստիճան ուժգին է: Հեղինակը անմիջական կերպով նկարագրում է այն ցնցող տպաւորութիւնը, որ նա ստացել է: Դրանք, անտարակոյս, իսկապէս զգացւած, ապրած, ցնցւած վկայի տպաւորութիւններ են:

«Սակայն, – շարունակում է նա, – յանկարծակի կերպով բնութեան բոլոր քնած ուժերը արթնացան: Քամիները սկսեցին փչել, փոթորիկը եւ քաօսը ամեն ինչ, չորս կողմը քանդեցին»:

Յայտնի չէ, թէ ում է ուղղւած այս նամակը: Յամենայն դէպս, դա ուղղւած չէր Դավադարին, այլ ուրիշ մի անհատի, որի հետ, ինչպէս երեւում է, նա կապւած էր մտերիմ կապերով:

«Իմ նամակներիս միջոցով, – շարունակում է նա, – ես ձեզ ծանօթացրել եմ այստեղի անցուղարձերի մասին եւ, հիմա էլ, զգում եմ, որ պէտք է լռութեամբ անցնեմ այն դէպքերը, որ տեղի են ունեցել այս վերջին օրերին»:

Նամակի երկրորդ մասում նա աւելացնում է. «Իմ նամակներին մէջ ես միշտ ուրախութիւն եմ յայտնել ձեր բարգաւաճ վիճակի մասին եւ, ես գիտեմ, դուք ձեր կողմից պիտի ինձ խղճաք թշւառ այն վիճակի համար, որի մէջ գտնւում եմ այժմ»:

Այստեղ նա նկարագրում է այն անել վիճակը, որի մէջ ընկել է տեղական բնակիչների հետ միասին: Վիճակը այնքան յուսահատեցնող էր, վախով ու վտանգներով այնքան լեցւած, որ «նրանք նախանձում էին մեռելներին»: «Նրբեք, այն ժամանակներից ի վեր, որ տարրերը կազմել են աշխարհը, նրանց հզօրութիւնը եւ կատաղութիւնը այդպիսի աւերներ չէր ցանել, աւերներ, որոնց նա ներկայ եղաւ տասը ժամ շարունակ»:

Ապա նկարագրում է. «Նախ մենք յարձակման եւ բռնութեան ենթարկւեցինք զօրաւոր եւ կատաղի քամիների կողմից, եւ կարծես դա չէր բաւի, մեծ ձիւնամրրիկներ լեցրին հովիտը, քանդեցին քաղաքի մեծ մասը եւ դեռ աւելի՛ ջրհեղեղը ծածկեց քաղաքի վարի մասը: Ապա, յանկարծակի կերպով, անձրեւ թափւեց եւ դահավէժ ջրերի մի հեղեղ, խառնւած աւազին, ցելին եւ քարերին, վայր թափեց արմատներ, տուններ եւ ճիւղեր եւ քչեց իրեն հետ: Եւ, վերջապէս, դրան յաջորդեց մի հսկայական հրդեհ, ոչ միայն քամիների պատճառով, բայց եւ նաեւ օժտ 30.000 սրիկաների պատճառով, որոնք քարուքանդ արին երկիրը եւ շարունակում են քանդել: Սակաւաթիւ վերապրողներ այնպիսի յուսահատական վիճակումն են, այնպիսի սարսափի մէջ, որ, ինչպէս ապաճներ, հագիւ համարձակում են մէկ մէկի հետ խօսել: Ամեն ինչ թողած, մէկ մէկի կպած, ապաստանել են եկեղեցիների աւերակներում՝ մարդիկ ու կանայք, մեծ ու փոքր՝ ինչպէս վախեցած այծերի մի հօտ: Եւ եթէ չլինէին նրանք, որոնք մեզ օգնեցին քիչ ուտելիք տալով, չնայած որ առաջ մեր թշնամիներն էին, մենք կը մեռնէինք անօթութիւնից»:

Դա ականատեսի ցնցիչ եւ յուզիչ, միանգամայն ճշմարիտ նկարագրութիւնն է հայկական ջարդի: Եթէ նա իր սեփական աչքերով տեսած չլինէր այդ սոսկալի դէպքերը, եթէ նա ինքը

անձամբ ապրած չլինէր այդ սարսափները՝ իբրեւ հեռաւոր օտարական, երեւակայել իսկ չպիտի կարողանար այդ ողբերգութիւնը:

Այս նամակը նա վերջացնում է հետեւեալ տողերով.

«Ես վստահ եմ, որ դուք, իբրեւ բարեկամ, պիտի ցաւէք իմ կրած դժբախտութիւններէս համար, ճիշտ այնպէս, ինչպէս ես ուրախանում եմ ձեր յաջողութիւններէ համար»:

Պարզ եւ ճշգրիտ այդ նկարագրութեան ընկերանում են նոյնքան ճշգրիտ եւ ուշալիստական գծագրութիւններ: Ուղտեր, որոնց միջոցով բնակիչները անցնում են գետը եւ երեք հայերի գլուխներ: Եւ նաեւ ճարտարապետական գծագրութիւններ:

4

Դա Վինչիի կիրիկեան ճամբորդութիւնը հաստատող ուրիշ բազմաթիւ փաստեր կան: Երբ, օրինակի համար, նա նկարագրում է հեռւից դիտած Կիպրոսը՝ «ոսկէ Վեներայի այդ աշխարհը», եւ խօսում է բազմաթիւ նաւաբեկութիւնների մասին, որ տեղի են ունեցել կղզու վտանգաւոր ժայռերի մօտ:

«Շատ շատեր գնացել են այդ կողմ, նրա՝ Վեներայի տաճարի գեղեցկութիւններից հրապուրւած: Բլուրների գեղեցկութիւնը հրաւիրել է թափառական ծովային մարդկանց վայելելու ծաղկազարդ կանաչը, ուր գեփիւռը շարունակաբար գնում-գալիս է եւ կղզին լեցնում անուշ բուրումներով: Աւաղ, բազմաթիւ նաւեր խորտակել են այդ ժայռի մօտ. դեռ մինչեւ այսօր կարելի է տեսնել նրանց բեկորները, աւազի մէջ կէս թաղւած: Մի տեղ՝ մէկի ցուռկը, միւս տեղ՝ միւսի յետոյքը, մի տեղ՝ մէկի ողնափայտը, միւս տեղ՝ միւսի կողը: Եւ թւում է, թէ մի օր, ինչպէս Վերջին դատաստանի ժամանակ, պիտի գայ այդ նաւերի յարութեան օրը, այնքան որ մեծ է նրանց թիւը կղզու արեւմտեան մասում: Այնտեղ հիւսիսային քամու ձայնը տաօրօրինակ եւ սպառնացող կերպով անդադար աղմկում է»:

Կան որոշ պատմական տւեալներ, որ հաստատում են Դա Վինչիի ասածները:

Յայտնի է, օրինակ, որ նրա ժամանակաշրջանում ապրող, այդպէս կոչւած Բաբելոնի Սուլթան Կախ Բաին, որը հաւանաբար վարձել էր Լէոնարդոյին իբրեւ ճարտարապետ, ճամբորդող վերատեսուչ եւ վերակառուցող, 1477-ին անցել էր ամբողջ Տիգրիսի եւ Եփրատի հովիտով, քննելու համար բերդերի վիճակը: Այդ բերդերը քառասուն տարի յետոյ ընկան տաճիկների ձեռքը:

Նաեւ ուրիշ գրաւոր վկայութիւններից պարզուում է, որ այդ շրջանին իսկապէս տեղի է ունեցել այն սոսկալի հեղեղը եւ երկրաշարժը, որ Լէոնարդօն նկարագրում է այդքան յուզիչ կերպով:

Ուրիշ մի կարեւոր պարագայ. Լէոնարդօն, նկարչական գոյների մասին խօսելիս, գործ է ածում Տերրա Արմենա գոյնը, որ մոլթ դեղնագոյնն է կամ բաց շագանակագոյնը, որ ուրիշներ երբեք չեն գործածած: Ծիշտ է, որ Հռոմէական շրջանի, մեր թլականից մէկ դար առաջ ապրող հռչակաւոր Պոլլօ Մարկուս Վիտրուվիոսը իր ճարտարապետութեան նւիրւած տասը գրքերում նոյնպէս գործ է ածում հայ անունը, բայց իր խօսքը հայ կապոյտի մասին է, որով ներկում էին տները եւ զանազան շէնքերը:

Պէտք է ենթադրել, որ Դա Վինչին այդ գոյնը, այդ հողը ինքը անձամբ բերել էր Հայաստանից:

5

Այդ բոլոր տւեալներից յետոյ հարց է ծագում, թէ ինչո՞ւ այսքան ակներեւ տւեալները ուրացւում են արեւմտեան եւ մասնաւանդ իտալացի պատմաբանների կողմից: Պարզապէս նրա համար, որ ուրանալով Լէոնարդոյի ճամբորդութիւնը դէպի Արեւելք եւ մասնաւորապէս դէպի Հայաստան, նրանք ուզում են ուրանալ հայ ճարտարապետութեան ազդեցութիւնը եւրոպական եւ մասնաւանդ իտալական ճարտարապետութեան վրայ:

«Վիճակած էր Իտալիային,— ասում է յայտնի աւստրիացի պատմաբան Ստրժիգովսկին իր «Քրիստոնէական եկեղեցու ծագումը» գրքում,— ծանօթանալ Եւրոպային երկրորդ անգամ, արեւելա-ասիական գմբէթի հետ... Վիճակած էր Վերածնունդին ընդունել էական առաւելութիւնը հայկական պարզ գմբէթի յատկագծի եւ նրան տալ տեւական մի տեղ եւրոպական ճարտարապետութեան մէջ»:

Պէտք է մոռանալ, որ Իտալական Վերածննդի ամբողջ սկզբնական շրջանը բնորոշած է նրա պայքարով հնի դէմ, նրա ծարաւով՝ ազատագրել նեղ սխոլաստիկ մթնոլորտից, նրա ձգտումով՝ վերադառնալ պարզ եւ ներդաշնակ ձեւերին, լոյսին, արեւին:

«Անիճեալ լինի այն մարդը, որ հնարել է թշւառ գոթական ճարտարապետութիւնը, — բացականչում էր Անտոնիօ Ֆիլարետէն, 1450-ին, — միայն բարբարոս մարդիկ կարող էին այդ ոճը ներմուծել Իտալիա»:

Ֆլորանսի Մայր եկեղեցին, շինած գոթական ոճով, տասնեակ տարիներով մնացել էր առանց գմբէթի եւ Բրունելեսկին կարողացաւ նրան ծածկել միայն այն ժամանակ, երբ դիմեց հայկական ոճին եւ տեխնիկային: «Երբ մարդ նայում է դէպի արեւմուտք եւ ներսից,— ասում է նոյն Ստրժիգովսկին,— կարող է մտածել, որ հայ ճարտարապետ է շինել այն»: Երբ նոյն Բրունելեսկին, աւելի ուշ, կառուցեց Պացցիների մատուռը, նա ընդունեց նոյն ձեւերը, որոնք յատուկ են հայ ճարտարապետութեան: Նա ընդունեց քառակուսին իբրեւ անհրաժեշտ հիմք՝ գետեղելու համար գմբէթի տակի ցցածքի վրայ: Նրա յատակազիծը Սանտա Մարիա դէլի Անջելիի համար նոյնպէս բոլորովին հայկական է:

Ալբերտին եւ Միքելոյին, որը եղել էր Արեւելքում, դեռ աւելի զարգացրին այդ ձգտումը, աւելի հարազատ կերպով ընդունելով գմբէթի գետեղումը քառակուսու վրայ:

Չնայած այդ ամենին, Լէոնարդօն, երբ մարդ դիտում է Հայաստանից բերած իր գծագրութիւնները, եղաւ առաջինը, որ ամբողջապէս ընդունեց եւ շահագործեց գմբէթային շինու-

Թեան այդ ձեւը, չնայած, որ սկզբում նա այդ ձեւը չէր կիրառել եկեղեցական շինութիւնների համար, այլ տարբեր կառուցւածքների համար:

Լէոնարդոյի գծագրութիւնները կարելի չէ բացատրել եւ հասկանալ առանց ընդունելու, որ նա ճամբորդած է Հայաստանում: Նրա ազդեցութեան տակ էր, որ Բրամանտէն բոլորովին լքեց գոթական ոճը եւ ընդունեց այն հայկական ճարտարապետութեան սկզբունքները, որոնք, աւելի ուշ, նոր ուղղութիւն տւին Սուրբ Պետրոսը կառուցանելու շրջանին:

Որ իտալական ճարտարապետական արւեստը չփոթման եւ անորոշութեան շրջան էր անցնում, մի փաստ է, որը հասկանալու համար լաւ է նշել Միլանոյի Դուոմոյի շինութեան պարագան: Զանգալեացցո Վիսկոնտին այդ կառուցւածքը սկսեց 1385-ին: Բազմաթիւ Ֆրանսացի եւ գերմանացի ճարտարապետներ հրաւիրեց, որովհետեւ իտալացի հեղինակաւոր ճարտարապետներ չկային: Այդ հրաւիրեալներից ամեն մէկը, ըստ իր ճաշակի եւ ձգտումների, մի ուրոյն սկզբունք կիրառեց, յաճախ հակասելով իր նախորդի կիրառած ուղղութեան: Այդպիսով ստեղծեց մի վերին աստիճանի չփոթ վիճակ: Այդ անյաջող փորձերը տեւեցին գրեթէ երկու դար: Երբ Զանգալեացցոն մեռաւ, միայն եկեղեցու պատերը շինած էին:

Երբ Լուդովիկոսը պետութեան գլուխն անցաւ, նա կանչեց Բրամանտէին եւ Դա Վինչիին՝ Դուոմոյի գործը շարունակելու համար: Նրանք ոչ մի բանով օգտակար չկարողացան հանդիսանալ. անկարելի էր աւարտել եւ պսակել մի շինութիւն, որ սկսւած էր այլազան ոճերի եւ ձեւերի խառնուրդով:

Սակայն, Արեւելքից եկած եւ իր հետ Հայ եկեղեցիների գծագրութիւնները բերած Լէոնարդոյի եւ Բրամանտէի հանդիպումը եւ աշխատակցութիւնը եղաւ բախտորոշ, գրեթէ նախախնամական: Քիչ յետոյ Բրամանտէն լիովին օգտագործեց բերած հայկական ճարտարապետական սկզբունքները: Սան Սատիրոն, արդարեւ ամբողջովին հայկական է: Բրամանտէն կիրառեց արեւելեան ոճը, գործածեց կէս ոլոր արսիղներ եւ աւանդատուներ, եօթանկիւնի կամարներ եւ բոլորածեւ

գմբէթներ: Տեղ չունենալով արսիղների համար, ինչպէս ճիշտ նկատում է Ստրժիգովսկին, Բրամանտէն, որպէսզի բոլորովին հարազատ մնայ ոճին, սեղանի ետեւի պատը ծածկեց նկարած արսիղներով, որպէսզի ստեղծի որոշ խորութիւն: Աւելի ուշ, Սանտա Մարիա դելլա Գրացիէ եկեղեցուն նա աւելացրեց մի արսիղ եւ մի կամար, որ նա պիտի գործ ածէր իր կառուցւածքների մէջ Հռոմում:

Լէոնարդոյի ճարտարապետական կենտրոնական դաղափարը յենւած էր ութանկիւնի կիրառման մէջ, որին նա միացնում էր մի յատակագիծ, որ համապատասխանում էր հայկական արսիղ հաստարան քառակուսիին՝ ներքին յենարաններով:

Երբ աւելի ուշ նա հաստատեց Յրանսիայում եւ շինեց Շամբորդի դղեակը, նա ներշնչեց հայկական պալատների ձեւերից: Այդ կառուցւածքի կենտրոնական կէտը, ինչպէս յայտնի է, կայանում է գմբէթաւորւած խաչածեւ դահլիճի յատակագծի մէջ, մի յատակագիծ, որից ուղղակի ներշնչել է Բրամանտէն Սուրբ Պետրոսի եկեղեցին շինելու ընթացքին:

Այդ բոլոր մէջքերած փաստերից յետոյ մենք կարող ենք եզրակացնել, որ, այո՛, Լէոնարդո դա Վինչին եղել է Հայաստանում: